

Զինական բանաստեղծութիւն

ՀԱՏԸՆՏԻՐ ԷՋԵՐ ԼԻ-ԹԱԻ-ՓԷ ԲԱՆԱՍՏԵՂԾԷՆ

ԲԱՐԵԿԱՄԻ ՄԸ ՄԵԿՆՈՒՄԸ

Դաժան նամբաներով կանանչ լեռնէն՝ ձե-
զի կ'ընկերանամ մինչեւ հիւսիսի շրջապա-
րիսպը :

Փրփրայոյզ ջուրը պատերուն շուրջ կը
քաւալի ու կը կորսուի դէպ ի արեւելք :

Այդտեղ է որ մենք կը բաժնուինք...

Ետ կը դառնամ, միակ, ու քալելն հիմա
տաժանելի կուգայ ինծի : Կը բուրի թէ տասը
հազար մղոն ունիմ կտրելիք :

Թեքեւ ամպերը կը սլախան, ծուլօրէն,
ինչպէս իմ մտածումներս :

Քիչ յետոյ արեւը մարը կը մտնէ, ա'լ ա-
ւելի սուր կերպով կը զգամ տրտմութիւնը բա-
ժանման :

Մ'ացառներուն վերելէն, վերջին անգամ
ձեռքս կ'երեքցնեմ, այն բռնակն ուր պիտի ան-
հետանամ :

Երկար խրիսնջիւնով մը, իմ ձիս կը ջանայ
ձերինը կանչել... Բայց բռնունի երգ մըն է
որ անոր կը պատասխանէ :

ՊԱՆԴՈՎԸ

Պառկած էի այս պանդոկի անկողնին մէջ :
Լուսինը, յատակին վրայ սպիտակ նշոյլ մը
կ'արձակէր :

Եւ նախ կարծեցի թէ ձիւնած էր յատակին
վրայ :



Գլուխս բարձրացուցի դէպ ի լուսինը պայ-
ծառ, եւ մտածեցի այն երկիրներուն որոնց-

մէ պիտի անցնիմ եւ այն օտարականներուն գոր պէտք պիտի ըլլայ որ տեսնեմ:

Յետոյ գլուխ ծոցի դէպ ի գետինը, եւ մտածեցի իմ երկրիս եւ այն բարեկամներուն գոր ա'լ պիտի չտեսնեմ:

ԿԱՐՄԻՐ ԾԱՂԻԿԸ

Պատուհանիս մօտ տրտմօրէն աշխատելու պահուս, մատս ծակեցի. եւ ներմակ ծաղիկը գոր կը բանէի՝ կարմիր ծաղիկ մը դարձաւ:

Այն ատեն յանկարծ մտածեցի անոր որ մեկնեցաւ ապստամբներուն դէմ կռուելու համար, խորհեցայ որ անոր արիւնն ալ կը վազէր հիմայ եւ արցունքներ բափեցան աչքերէս:

Բայց կարծեցի լսել անոր ձիուն ոտնաձայնը, ու ոտք ելայ ցնծութեամբ: Սիրտս էր որ, շատ արագ բարախելով, անոր ձիուն ոտնադռոփին պէս ձայն մը կը հանէր:

Նորէն գործս ձեռք առի, պատուհանին մօտ, եւ արցունքներս դազկանին վրայ պըրկուած կերպար մարգրիտներով ասղտնագործեցին:

ՅԱՆՃԱՊԱԿԻՆԷ ՏԱՂԱԽԱՐԸ

Արուեստական լեակին մէջտեղը, կը կանգնի տաղաւար մը կանանչ ու ներմակ յախնապակիէ. հոն կ'երթցուի յասակափարէ կամուրջով մը, որ կը կորանայ ինչպէս վագրի մը կռնակը:

Այդ տաղաւարին մէջ, քանի մը բարեկամներ, պայծառ պատմութեաններ հագած, գաղջ գինիի բաժակներ կը խմեն միասին:

Ուրախ կը խօսակցին կամ ոտանաւորներ կը գրեն, գլխարկներն դէպ ի ետ հրելով, բեւերներն փչի մը սորտելով:

Եւ, լինի մէջ, ուր փոքրիկ կամուրջը, շրջուած, կը բռնի մահիկ մը յասակափարէ, քանի մը բարեկամներ, պայծառ զգեստներ հա-

գած, կը խմեն, գլխովայր տաղաւարի մը մէջ յախնապակիէ:

ԵՕԹԵՐՈՐԴ ԱՄՍՈՒՆ ՄՏԱԾՈՒՄՆԵՐԸ

Պարտէզիս ծաղիկներուն մէջ, կ'երագեմ, խմելով գինի մը՝ յասակափարի պէս բարձու բափանցիկ:

Հովը մեղմօրէն այտերս կը շոյէ ու հը-



բատոյնը օդը կը զովացնէ. բայց երբ ձմեռը գայ, ինչպէ՛ս վերարկուիս մէջ պիտի փաթ-բուիմ:

Կինը, իր գեղեցկութեան լուսափայտութիւն մէջ, նման է օգոստոսի գաղջ հովին. ան մեր կեանքը կը զովացնէ ու կը բուրումնաւտէ:

Բայց, երբ տարիին ներմակ մետաքսը գլուխը ծածկէ, կը փախչինք անկից ինչպէս ձմեռուան հովէն:

ԳԵՏԻՆ ՎՐԱՅ ԵՐԳ

Երբնոսէ է նաւակս, յասկաֆարէ սրինգս
ոսկի ծակեր ունի:

Ինչպէս տունկը որ մետաքսէ կերպասի մը
վրայէն արատ մը կը հանէ, գինին տրտմու-
թիւնը կը ջնջէ սրտին մէջ:

Երբ մարդ ունի լաւ գինի, շնորհալի նա-
ւակ մը եւ մանկամարդ կնոջ մը սէրը, անմահ
հոգիներուն նման կը դառնայ:

ԻՄԱՍՏՈՒՆՆԵՐԸ ԿԸ ՊԱՐԵՆ

Յասկաֆարէ ծայրերով իմ սրինգիս մէջ՝
երգ մը երգեցի մարդոց. բայց մարդիկ զիս
չհասկցան:

Այն ատեն սրինգս բարձրացուցի դէպ ի եր-
կինք, եւ ըսի իմ երգս իմաստուններուն:

Իմաստունները հրնուեցան, լուսաշող ամ-
պերուն վրայ պարեցին:

Ու հիմայ, մարդիկ զիս կը հասկնան երբ
յասկաֆարէ ծայրերով սրինգիս ընկերակցու-
թեամբ՝ կ'երգեմ:

ԽՈՐՀՐԳԱԽՈՐ ՍՐԻՆԳԸ

Օր մը, տերեւներուն եւ անուշափոս ծա-
ղիկներուն վրայէն, հովն ինծի հեռաւոր սը-
րինգի մը ձայնը բերաւ:

Այն ատեն, ուռենիի նիւղ մը կտրեցի, ու
երգով մը պատասխանեցի:

Անկից ի վեր, գիշերը, երբ ամէն ինչ կը

ֆնանայ, բռնունները իրենց լեզուով խօսակ-
ցութիւն մը կը լսեն:

ՅԱԻՏԵՆԱԿԱՆ ՏԱՌԵՐԸ

Ոտանաւորներս գրելու ատեն, կը դիտեմ
պատուհանէս պամպուներու տատանումները.
կարծես ջուր է որ կը ծփայ: Ու տերեւները՝
իրենց փուշերն իրարու քսելով՝ ջրվէժներու
ձայնը կը նմանցնեն:

Թուղթին վրայ տառեր կը բափեմ. հե-
ռուէն՝ կրնայ կարծուիլ թէ սալորենիի ծա-
ղիկներ եւն որ ձիւնին մէջ կ'իյնան գլխիվայր:

Մանտարիներու զմայելի բարմութիւնը
կը բռնի, երբ կին մը զանոնք իր բուին շը-
ղարշին մէջ շատ երկար պահէ:

Նոյնպէս եղեամբ կը ցնդի երբ արեւը վը-
րան զարնէ. բայց տառերը զոր ես բղթին վը-
րայ կը բափեմ, երբեք պիտի չարուին:

